


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրայի տպի համար տրեկին. ողջ դհ. 80
, , վեցամսեայ , 50
Օտար երկիրներ տարեկան ֆրանկ 25
, , վեցամսեայ , 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ հա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԵԳԻՊՏԱԲՆԱԿ ԶԱՅԵՐԸ
ԳԹՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ

Ընդհանրապէս գիտուած է որ եգիպ-
տոս բնակողներուն շատերը լեռնա-
հովիտներէն կը բռնուին . բոլորական հեղի-
նակութենէ զուրկ ըլլալով չենք կրնար ը-
սել թէ նեղուսի ջուրին և կամ բուրգերուն
օդին վերագրելու է այդ դժբաղդութեան
պատճառը : Այդ հոգը Էսքիւլապի աշա-
կերտներուն ձգելով, պիտի ուզէինք սա-
կայն գիտնալ թէ ի՞նչու եգիպտոս բնա-
կող հայերուն սիրտը աւելի կարծր, աւելի
անդդուելի և նուազ զգայուն կըլլայ . քան
ուրիշ տեղ գտնուող հայերունը :

Եթէ սրտի այդ բարոյական տկարու-
թիւնը որքան մեր՝ նոյնքան օտար դաղութե-
ան մէջ աչքի զարնէր, ապահովապէս պի-
տի կարծէինք թէ Սփինքսը՝ իր բազմադար-
եան անտարբերութեամբ և անյողդողդ կեր-
պարանքով, անդդուելի մնալու օրինակը
տուած է Մէհմէտ Ալիի երկիրը բնակող ժո-
ղովուրդներուն :

Դժբաղդաբար սակայն այդ չէ ճշմար-
տութիւնը : Եգիպտոսի մէջ ապրող խալդիւն-
բու, սուրիացիներու, յոյներու, իտալացիներու,
ֆրանսացիներու և ուրիշ խել մը օտարազգի-
ներու պատկանող հիւանդանոցները, ան-
կեանոցները, վարժարանները և տեսակ տե-
սակ գթութեան յարկերը այնքան շատ են
որ կարելի չէ կասկածիլ թէ գթութիւնը՝
սրտի այդ ձիւրքը, որեւէ կերպով թուլացած
ըլլայ Սփինքսին երեսէն :

Բայց միևնոյն բանը չենք կրնար ըսել
մեզի համար ալ :

Գթալու, ողորմելու, և իր նմանին ցաւե-
րուն կարեկցելու զգացումը՝ որով կարելի
է միայն ապացուցանել թէ աստուածային
բան մը ունինք մեր մէջը — այո՛, այդ գերբ-
նային զգացումը չես գիտեր ինչու խոյս կու-
տայ եգիպտաբնակ հայերու սրտերէն :

Որքերու խնդիրը բաւական է այդ աը-
խուր համոզումը գոյացնելու համար :

Ատաբազար, Կէյվէ, Պարտիզակ, օրի-
նակի համար, ուր հոս տեղի չափ ոչ հա-
րուստներ, ոչ վաճառականներ, և ոչ ալ սե-
ղանաւորներ կան, իրենց փոքրիկ աննշան
քաղաքներ ըլլալով հանդերձ, հազար ան-
գամ աւելի նպաստեցին այդ մարդասիրական

և մանաւանդ ազգասիրական գործին, քան
Գահիրէ և Աղեքսանդրիա :

Պոլսոյ և Իզմիրի հայերը, հակառակ
այդ երկու կեդրոններուն մէջ տիրող տըն-
տեսական տագնապին և հակառակ իրենց
նպաստներովը կանգուն կեցող հիւանդանոց-
ներուն, դպրոցներուն, և ուրիշ տեսակ տե-
սակ բարեգործական հաստատութիւններուն,
գթութեան մեծ բաժին մը հանեցին ի նպաստ
մեր որբերուն :

Մայրաքաղաքի թերթերը օր չանցնի որ
նուիրատուութեանց երկայն երկայն ցան-
կեր չի հրատարակեն, այս օր Ս. Փրկչի հի-
ւանդանոցին, վաղը Խասգիւղի որբանոցին,
միւս օր այս ինչ գթութեան յարկին համար :
Իզմիրի, Մանչէսթըրի, Ռոտտըմի, Տրապիզո-
նի, Անդրիանուպոլսոյ և ուրիշ նուազ կարեւոր
տեղերու հայերը, միշտ, շարունակ մասնակ-
ցած են այդ հանգանակութեանց, միայն ե-
գիպտոս է որ երբէք մաս չէ ունեցած ա-
նոց մէջ :

Եւ ըսել թէ թերեւս միակ տեղն է ե-
գիպտոս՝ ուր ամենէն քիչ անգամ գթու-
թեան կոչումներ կըլլուն :

Ազգային հաստատութիւններու բեռը,
ուրիշ տեղերու պէս, ժողովրդեան ուսին վրայ
չի ծանրանար հոս :

Տեսա՞ծ էք երբէք եգիպտացի հայ մը, որ
ինքնաբերաբար տասը զրուշ զրկած ըլլայ Ս.
Փրկչի հիւանդանոցին որ Պոլսոյ մէջ գըտ-
նուելուն համար, ամբողջ հայ ազգին պատ-
կանելէ չի դադրիր :

Գուցէ գտնուին այնպիսիներ որ դաղ-
թականները մէջ տեղ դնելով պարծենան թէ
իրենք ալ մեծ գործ մը ըրած են : Իրաւ է
որ — պէտք չէ ուրանանք — հոստեղի հայերն
ալ բաներ մը ըրին այդ խեղճերուն համար,
բայց չի մոռնանք թէ այդ մարդասիրական
գործին մէջ հայերը շատ աննշան տեղ մը
գրաւած են, և եթէ եւրոպացիները չըլլա-
յին, մեր գաղթականներուն երեք քառորդը
անօթութենէ մեռած կըլլար մինչեւ այսօր :

Բայց որբերուն համար ի՞նչ ըրինք : Ոչինչ :
Յանձնաժողով մը կազմուեցաւ, ատե-
նապետ մը, ատենադպիր մը և գանձապետ
մը ընտրելու հաճոյքին համար և յետոյ խօսքն
անգամ ընող չեղաւ . . . Գարակէօզեան կը-
տակին պէս :

Այս ընդհանուր անտարբերութեան մէջ
ամենէն շատ յանցաւորը, — չենք քաշուիր

յայտարարելէ — եգիպտոսի հայ կղերը ե-
ղած է :

Աշխարհականներէ աւելի կրօնականնե-
րու գործն է դիմում ընել հասարակու-
թեան, շարժել անոր սիրտը, և հրաւեր կար-
գալ անոր մարդասիրական զգացումներուն :

Մեր քահանայից առաքինազարդ դասը,
dolce far nienteի երանութեան մէջ ընկողմա-
նած, մտքէն անգամ չանցնելու թէ պարզա-
պէս իր պարտականութիւնն է պաշտպանել
որբերուն դատը՝ ձեռք բերելու համար շօշա-
փելի արդիւնք մը ի նպաստ այդ 40,000 գը-
թութեան արժանի աշխարհներուն :

Այս տառներորդ անգամն է որ Փարոս
այս խնդիրը մէջտեղ կը նետէ : Կարգը մեր
քահանաներունն է :

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ
ԴԷՊԻ ՎԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍ

(Շար. հախորդ քիւեհ)

Մէտինէթ Հապուի տաճարէն քիչ մը հեռուն կը
գտնուի Տահր-է-Մէտինէթի փոքրիկ տաճարը որուն
հիմարկուն եղած է Պտղոմէոս Դ. (220 Ն. Ք.) և
աւարտած է Պտղոմէոս Թ. Ի օրով. (146 Ն. Ք.) : Իր
սենեակներուն միայն մէջ գտնուած քանդակները կը
ներկայացնեն վերջին դատաստանի տեսարանը 47
դատաւորներէ բաղկացած :

Այս տաճարէն կէս մղոնի չափ հեռուն կանգ-
նած են Ամէնհօթէպ Գ. Ի երկու հսկայ կօթիօնները
որ մեծութեան մասին թէեւ չեն կրնար հաւատարիլ
Ռամսէս Բ. Ի վիթխարի կօթիօնին, սակայն անկէ
նուազ հետաքրքրական ու չեն : Ասոնց վրայ գըտ-
նուած արձանագրութիւնները ցոյց կուտան թէ
Ամէնհօթէպ Գ. Ի կառուցած էր հոռոտ տաճար մը որոյ
նախադրան երկու կողմերը կանգնած էին այս ար-
ձանները : Տաճարին հետքը իսկ չէ մնացած, սա-
կայն կօթիօնները կը մնան դեռ 3564 տարիներէ
ի վեր : Իւրաքանչիւրին բարձրութիւնն է 60 ոտք .
երկուքն ալ շինուած են միակտուր խճաքաւ : Եթէ
Ամէնհօթէպ Գ. Ի կենայ մէջ ըրած չըլլայ ուրիշ
ո եւ չգործ մը, այս Կոյգ մը հսկայ արձանները
բաւական են իր անունն անմահ պահելու : Տակաւին
գտնուած չէ այցելու մը որ առանց հիացման տը-
պաւորութեան մը մեկնած ըլլայ այդ վայրէն :

Երբ պարսիկները ֆամպիսէսի առաջնորդու-
թեամբ արշաւեցին եգիպտոսի վրայ ու գրաւեցին
Թէպիսը (528 Ն. Ք.), շատ մը տաճարներ կրակի
տուին՝ որով հիւսիսային կօթիօնին գագաթնամա-
սը ձեղքուեցաւ, այս պատճառաւ մերթ ընդ մերթ
ձայն մը կը լսուէր այդ արձանէն և եգիպտացիք
հաւատալով թէ աստուածային ձայն մըն է ան, այդ
արձանը կը կոչուէր ձայնարձակ կամ երաժիշտ ար-
ձան : Սղորած պատմիչը երբ այցեւեց Թէպիսը
Էլիոս Կալուսի հետ կըսէ թէ, զայն մը լսեցի օրը
ուսն առաջին ժամերուն մէջ, բայց թէ այդ ձայն-

յատակէն կամ գագաթէն եկաւ, կամ մասնաւոր մէկէ մը որ յատկապէս կեցած էր այդ նպատակաւ չեմ կրնար հաստատապէս ըսել: Արձանին վրայ գրուած լատիներէն գիրերը ցոյց կուտան թէ շատ մը հռովմայեցիներ այցելած են հող: Բէդրոնիւրս կը պատմէ թէ, «արձանն հառաչալից ձայն մը կը հանէր գանգատելու համար իր ձոր, արշալուսին, քամ, պիսիսէն կրած փնասուց համար: Երկրաշարժով մը արձանին գագաթի այդ մասը կը կոտորի կիսնայ գետին (27 Ն. Գ.): և կը նորոգուի Սէթթիմըս Սէվի-րըսէն և ձայնն ալ կը դադրի ալ եւս:

Թէ՛հպիսէն, կամ Լուքսորէն ինչպէս կը կոչուի հիմայ, մեր նաւային ճամբորդութիւնը շարունակեցինք դէպի Էմնէ՛ փոքրիկ գիւղ մը գետին արեւմտեան ափանց վրայ: Էմնէ՛ 485 մղոն հեռաւորութիւն ունի Գահիրէէն. իւր հնագոյն անունն է Սե-նեթ, յոյները Լատոօրիս անունը կատարին այս բաղաբն, որովհետեւ տեղւոյն բնակիչները կը պաշտէին լատոս կոչուած ձուկը: Տաճարը, որ կը կենայ գիւղին ճիշդ կեդրոնը, գրեթէ իւր ամբողջութեան վիճակին մէջ է և կը կարծուի ըլլալ հռովմէական շէնք: Կառուցուած է 24 խողով սիւներու վրայ որոնք ամբողջապէս ծածկուած են բեւեռագրերով, բանդակներով և յնով. իւրաքանչիւր սիւնն ազդու ունի տարբեր ձև և ներկ. տաճարին ներքին, մասը թէ և պեղուած և մաքրուած է սակայն արտաքին մասը ծածկուած է մինչև սիւնազդուի ներք: Կառավարութիւնը վերէն գլու մը բացած և սանդուխ մը հաստատած է վար իջնալու համար:

Թոթմէս Գ. ալ կառուցած է հոս տաճար մը որ կը կարծուի թէ այս տաճարին մօտը կը գտնուի և աւերակներու տակ թաղուած է:

Էմնէ՛յէն մեր ճամբան շարունակեցինք դէպի Էտֆու, բաւական մեծ գիւղ մը գետին արեւմտեան կողմը: Էտֆու 516 մղոն հեռի է Գահիրէէն: Իր վաղեմի անունն է Պիհութէթ. յոյները կանուանէին Արօինօօրիս: Հոս գտնուած տաճարը թէեւ հազիւ 2125 տարուան հնութիւն մը ունի, սակայն իր բեւեռագրերն և բանդակները խիստ հետաքրքրական են: Եգիպտական բոլոր տաճարներուն մէջ ամենէն կատարեալը և ամենաբարձրն այս տաճարն է. տաճարին շինութիւնը աւարտած է 180 տարիէն 3 ամիսէն և 14 օրէն:

Նախադրան աշտարակաձեւ պատերը ծածկուած են գեղեցկապէս քանդակեալ պատերազմական տեսարաններով. այս պատերու բարձրութիւնն է 112 ոտը: Նախադրան երկու կողմերը սանդուխներ ունի, 242 աստիճաններով, ուրկէ գագաթը կենն հիտեղու համար ամբողջ գիւղը և դաշտը: Պատերու վրայ գտնուած արձանագրութիւնները ցոյց կուտան հին Եգիպտոսի աշխարհագրական մանրամասն բաժանումները, տաճարին մէջ գտնուած շատ մը սենեակներու մեծութեան չափը, անունները և ին:

Այս տաճարէն քանի մը կանգուն անգին ուրիշ փոքրիկ տաճար մը եւս կերելի, աւերակայ կոյտերու մէջ, ուր պեղումները սկսած են և կը շարունակուին:

Սակէց շարունակելով մեր ճամբորդութիւնը հեւտեալ առտուն հասանք Գոմ Օմպոս, գետին արեւելեան ափանց վրայ: Գոմ Օմպոս 557 մղոն հեռաւորութիւն ունի Գահիրէէն. իր հնագոյն անունն է Բա Սէպէք (տաճար կամ քաղաք Սէպէքի): Հոս տեղւոյն բնակիչները կը պաշտէին Սէպէքը (կոկորդիլոս) որուն ի յիշատակ թոթմէս Գ. շինած է գեղեցիկ տաճար մը և որուն վրայ յետոյ յաւելումներ եղած են: Տաճարը ճիշտ գետին բերանը կառուցուած ըլլալով, Նեղոսի տարեկան յորգումները անոր մեծ մասը աւած տարած են. հիմա կառավարութիւնը թուրքեր շինած է տաճարին միացած մասը անփնտս պահելու համար: Տաճարը իր ներկայ վիճակին մէջ 500 ոտք երկայնութիւն և 250 ոտք լայնութիւն ունի. շինուած է կրկնակ տաճարի մը ձևով. ունի երկու սրահներ, մին կը սրբաւանակէ 16 սիւններ որոնց վրայ կը տեսնուի Տիբերիոսի անունը, միւսը կը պարունակէ 19 սիւններ իւրաքանչիւրը 40 ոտք բարձր: Պատերուն ներքին երեսներուն վրայ քանդակուած պատկերները այնքան գեղեցիկ ու գեղարուեստական ճաշակով շինուած են որ կարծես կենդանի էակներու նման կը ժպտին զիտողին երեսնի վեր:

Հոս գտնուած բեւեռագրերն ու արձանագրութիւնները կը ներկայացնեն Պտղոմէոս Է.ի ուղեբժը տաճարի նուիրաբործման առթիւ, հին եգիպտական կրօնական տօնացոյցն, և գաւառակներու աշխարհագրական անունները:

(Շարունակելի)

ՏՅՔ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

Գահիրէի մէջ, գոնէ կես երկոսան-նեակ աղբիկներ եւ նոյնքան երիտասարդներ կան այս վայրկեանիս, որ առջի պսակի կիրակիին դեռ քանի օր մնացած ըլլալը՝ մասնաւորապէս վրայ կը համեմատեն օրն ի քուն:

Ոչ ոք իրաւունք ունի այսպէս զի-րեմեմ, այնքան աղքատ քան է ձերմակ, երկայն շրջագոյն հագնելը, ինչպէս նաեւ փեսայ ըլլալը:

Բնականաբար, ամուսնութեանց երջանկաբոյր պատիկը, Առջի Պատիկն օրը... իր բոլոր վարդապոյն ծայրը պիտի ցուցունէ որոշեալ քուսակներն եւ այդ սիրաշոյ ամուսնուր, զոյգ զոյգ պիտի մեկնին ամուսնուր աշխարհէն, ամուսնացածներու մեծ ընկերակցութեան մէջ մեկնելու համար:

Հարսերը գեղեցիկ պիտի ըլլան այդ օրը իրենց ապիսակ արդարադրիկ մէջ, սիրուն, յարաձգի ժպիտ մը պիտի ունենան շրթներուն վրայ եւ երջանկաբոյն իր գեղեցիկ ցոյցերը պիտի դնեն անոնց աջերուն մէջ:

Նոյնպէս փեսաները, ծանր, շուրջ, բայց գոհունակ եւ ուրախ կերպարանք մը պիտի առնեն երբ աւանդական «այո»ն պիտի արձանագծեն իրենց ակունքներուն ծայրով:

Այս ամենը պիտի ըլլայ, օրհորդներ, այդքան անձկութեամբ սպասուած կիրակիին, ամեն կիրակիներուն պես իր ժամանակին պիտի հասնի՝ եւ դուք ալ ձեր նպատակին:

Անշուշտ պիտի ուզեմ որ ձեր հարսնիքի փառաւոր ըլլայ, շատ մը հրաշքերով գեղուն, շարժական գեղի պէս հոսի եւ շախմատները աւագի չափ առաս ըլլան:

Իրաւունք ունիք այս ամենը ուզելու, երջանկութեան դուները ձեր առջեւ բացուած կը համարիք եւ յաղթական մոտի մը ընկն կուզեմ անկէ ներս:

Բայց, եթէ խրատ մը կուզեմ, — այս իմ ձեզ տուած հարսանեական ընծաւ քող ըլլայ, — մի պահանջեմ որ ձեր ծնողքը ահագին ծախսեր ընեն առանկ ոչինչ քաներու համար. ընդհակառակը ստիպեցեմ որ այդ ծախսերից ստակէն մաս մը որքերուն յաւկանցեն, մաս մը գաղթականներուն եւ եթէ աւելնայ՝ այն ալ մեր Պոլսոյ հիւանդանոցին:

Շարժականայն շատ շատ կրնամ զի-նովնայ, բայց եթէ անպատշաճ երջանիկ ըլլալ կուզեմ, աղիւսները մի մոռնալ:

ԳՐԶԻ ԲՄԱՎԱՃՈՅԲ

ՌԱՄՍԷՍ ԱՌ ՕՍԻՐԻՍ

Ձայն մի՛ հաներ, Օսիրիս, մեծ վտանգ մը անցուցինք:

Մի կարծեր սակայն թէ այդ վտանգը Սիւէդի դէպքն է, հայի ողբութիւնը, Ամերիկայի պատերազմը, բարձրապատիւ խնդիր մը չափատակութիւնները, ատենապետի մը հրաժարականը և կամ ուխտաւորներու վերադարձը. ասոնք կարեւորութիւն չունին իմ ըսած վտանգիս քով:

Անշուշտ չեմ մոռցած որ ամէկ ամիս մը, ամիս ու կէս առաջ, օր մը, տասներկու հոգիէ բաղկացած ժողով մը «վերամբարձ ձեռնհարութեամբ» երկուստեք ընտրեց մէկ ամբողջ վրայ բաղմուն համար:

Ամեն կողմէ բողոքներ լսուեցան. — Ա՛ս չըլ-լար, — Ա՛ս սահմանադրական չէ, — Ա՛ս անկանոն է, կը պառնային: Պոլսոյ, Մարսիլայի, Ամերիկայի և Կովկասի թերթերը մեր երեսփոխաններուն վրայ խնդրային, քաջբեցին և յայտարարեցին բացարձակապէս թէ աստանկ ընտրութիւն մը անվայել էր աղբային արժանապատուութեան տեսակէտով:

Առաջի ընտրեալը մինակ կրնար առաջնորդ ըլ-լալ միւսը՝ Յովսէփ վարդապետը, թող տեղը նստէր. ահա՛ ինչ կարտայայտէր հանրային կարծիքը:

Ես, սիրելի իմ Օսիրիս, ամենէն շատ պոռայի և լեարդերուն ամբողջ ուժովը բողոքեցի ընտրութեան այդ այրանդակ եղանակին դէմ:

Հարցուր թէ ինչու...:

Մի կարծեր թէ շատ հոգս էր որ մեր երեսփոխաններուն աշխարհքէ խապար չունենալին յայտնի եղաւ այս նիստին մէջ և կամ՝ Սահմանադրութիւնը մեռեալ տառի տեղ դրուեցաւ այդ օրը: Փոյթս ալ չէր, եթէ մեր աղաները Յովսէփ վարդապետ մը առաջ ընէ ուղեցին և չի վախցան այդ առաջը դնելու նուիրական անունի մը քով: Բնականաբար իմ գործս չէր գիտնալ թէ այդ ընտրութիւններուն ելքը ի՞նչ պիտի ըլլար:

Ինծի համար վտանգը հոս չէր:

Երեւակայէ եղբայր, որ հակառակ օրինաց և աղբիւր փափաքներուն, անոնի մը պատահէր որ — սա, տանան գործ չունի — այդ Յովսէփ վարդապետը սածնին Եգիպտոսի Առաջնորդ ըլլար:

Վտանգը կը տեսնեմս կոր... չէ՞... որքան ապուշ ես, եղբայր:

Բայց, Օսիրիս, խնդիրը շատ պարզ է սակայն: Ենթադրէ որ Յովսէփ կոչուած վարդապետը անէին առօք փառք նստեցնէին այդ ոսկեգոծ եւ փշալի ամբողջ վրայ: Այն ատեն գիտե՛ս ինչ պիտի ըլլար, չէ՞. սա՛ պիտի ըլլար որ փոխանակ Չատիկ շարթուն միայն Այվազեան մը ունենայու, տարին տասներկու ամիս Այվազեան մը պիտի ունենայինք մեր աչքին առջեւ:

Ի՞նչ, ամիսայ վտանգ մը չէ՞:

ՌԱՏԱՄԷՍ

ՊԱՏԵՐԱԶՄԸ

Տխուր լուրեր կը հասնին մեզի Եւրոպայէն՝ ուր սկսած է պատերազմին հակադրեցութիւնը: Իտալիոյ մէջ, ուր ժողովուրդը անօթի է, ընկերական յեղափոխութեան մը ուրուականը կը սաւառնի հարիւրաւոր դի-ակներու վրայ: Ֆրանսայի մէջ, հակառակ կառավարութեան ձեռք առած խիստ միջոցներուն և դրամական ահագին զոհողութիւններուն, միշտ կը վախցուի պայթումէ մը: Միլենոյն բանը Գերմանիոյ մէջ և ուրիշ տեղեր: Իսկ Սպանիոյ համար, պատերազմի ա-մեն մէկ օրը երկրաշարժի զօրաւոր ցնցում մըն է իր խաղաղ շէնքին:

Ու տակաւին սկիզբներն ենք. հազիւ ամիս մը կ'ընէ պատերազմին հաշակուիլը, հապա եթէ ամիսներ տեւէ...:

Այս անակնկալ խառնակութիւններուն առջև, Եւրոպական ընդհանուր միջամտու-թեան մը գաղափարը կը ծնի շատ տեղեր: Բայց մեզի տրուած դասերը տակաւին չեն մոռցուած և Եւրոպական համաձայնութեան մը գաղափարը ողջամիտ մարդոց ծիծաղը միայն կը շարժէ:

Արդեօք դեռ ինչ նորութիւններ կը վերապահէ մեզի այս պատերազմը:

Ահաւասիկ շորեքշորթի օրուէն ի վեր ստացուած հեռագիրներն ու տեղեկութիւնները պատե-րագմին վրայով:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խտիվին նախագահութեամբ՝
Նախարարաց Խորհուրդը իր առաջին նիստը
ըրաւ հինգշաբթի օր, Ռաս-էլ-Թինի պալատը։
Խորհուրդը փակոցներու (barrage) խնդրովըզ-
բաղած է այդ նիստին մէջ։

—Հիմազէ վերադարձող ուխտաւորները
էլ Թորի մաքրանոցին մէջ տաս օր կենալէ
ետքը պիտի արտօնուին Եգիպտոս մտնել։

—Փուտա փաշայի վիճակը երթալով բար-
ւոքելու վրայ է և կը կարծուի թէ այլ եւս
զերծ է որ և է վտանգէ։

—Պ. Կօկօրտան որ քանի մը օրուան հա-
մար Սիւէզ գացած էր, երէկ Գահիրէ վե-
րադարձաւ։

—Մաթարիէի բնակիչներուն խնդրան-
քին վրայ Ջուրի ընկերութիւնը որոշած է չը-
րաբաշխ խողովակներ հաստատելով՝ ջուր մա-
տակարարել Տէմիրտաշէն սկսեալ մինչեւ Մա-
թարիէ, երկաթուղիի գծին վրայ գտնուող
բոլոր բնակութիւններուն։

—Պէնի Սուէֆի տեղական դատարանը
ցկեանս տաժանակիր աշխատութեան դատա-
պարտած է այն հինգ կաֆիրները որ Մա-
կակայի մէջ լորտ Բուբրի ծառան սպաննեցին
ասկէ երկու երեք ամիս առաջ։

—Գրաւիչ բանակին հրամանատար Սըր
Փրանսիս Կրէնֆէլ, արձակուրդով Եւրոպա
ուղեւորեցաւ երէկ։

—Բարձր. Խտիվը արաբական ընտիր նը-
ժոյգ մը ընծայ զրկած է Սիամի թագաւոր
Շուլալօնկէօնի։

—Աղեքսանդրիոյ թաղապետութիւնը ու-
րոշած է Կուշիօ անունը տալ քաղաքին փո-
ղոցներէն մէկուն։

—Մէքքէէն ստացուած նորագոյն լուրե-
րուն նայելով, ամբողջ Հիմազի մէջ հիւան-
դութեան հետքն անգամ չէ մնացած։

Ապրիլ 17էն ի վեր ժանտախտի և ոչ
մէկ դէպք պատահած է ի ձիտտէ։

—Առողջապահական ժողովը երէկ ցե-
րեկուրնէ սկսեալ մաքուր քաթանդ տալ սկը-
սաւ Եգիպտոսի որ և է նաւահանգստէ մեկ-
նող շոգենաններուն։

—Երէկ Գահիրէի բոլոր բարեգործական
ընկերութիւններուն նախագահները ժողով մը
ըրին Պ. Սուարէսի գրասենեակներուն մէջ,
Բասթէօրեան դրութեամբ դարմանատուն մը
հաստատելու միջոցներուն վրայ խորհելու հա-
մար։

—Մաքսային վարչութեան հրատարակած
տեղեկագրէն կերեւի թէ անցեալ փետրուար
ամսուան մէջ ներմուծուած ապրանքներուն
արժէքը 692,387 եգպ. ոսկի եղած է մինչ-
դեռ անցեալ տարի մի և նոյն ամսուն մէջ
759,419 ոսկիի գումարի մը կը հասնէր։

Նոյնպէս արտածութեան թուանշաննե-
րու մէջ 139,327 ոսկիի նուազում մը կը տես-
նուի։

—Ծաղկախտը որ բաւական ժամանակէ
ի վեր կը տիրէր Աղեքսանդրիոյ մէջ բոլորովին
անհետացած է։

—Աղեքսանդրիոյ մէջ հանգանակութիւն
մը բացուած է Տըթ. Չանկարօլի կիսարձանը
կանգնելու համար յունական հիւանդանոցին
պարտէզին մէջ։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Մ Ա Բ Բ Ի Ն Լ Է Յ

Օրուան մարդն է ալ ևս։ Ամբողջ աշ-
խարհ յառած է աշուրները՝ Maison Blancheի
վրայ՝ ուրկէ կը մեկնին պատերազմին վերա-
բերող ամբողջ հրամանները։

Պ. Մաք-Բինլէյ Սկոտլանդական սերունդէն
է։ 1844 ին ծնած է Օհիօի նահանգին մէջ։
Փիզիքապէս ազարակապան ազնուականի մը
կը նմանի։ Հսկայ, ուսերը լայն, ածիլուած
գէմքով, կապոյտ աշուրներով, զօրեղ տի-
պար մը։

Հազիւ վարժարանէն ելած, Sécessionի
պատերազմին ժամանակ կամաւոր կը գրուի
և կը կռուի մինչև անոր վախճանը։

Հետեւեալագորաց համարակալի աստի-
ճանով կը վերադառնայ պատերազմէն և կը
սկսի իրաւագիտութեան աշխատիլ։ Քիչ ա-
տենէն դատախազի աստիճանը կ'ընդունի և
վերջապէս իր ծննդավայրին, Օհիօի ներկա-
յացուցիչը կ'ըլլայ ծերակոյտին մէջ։

Պ. Մաք-Բինլէյ մանաւանդ զբաղած է
տնտեսական խնդիրներով, կատաղի կռիւ մը
մղած է ոգելից ըմպելիներու դործածու-
թեան դէմ և շատ ուժ տուած է ժողովալու-
թեան ընկերութիւններու տարածման։

Մոլի աշխատող մըն է. արշալուսին
կ'արթննայ և գիշերը շատ ուշ կը պառկի,
ամեն գործերը կարգադրելէ, թղթակցու-
թիւնները քննելէ, բարեկամներ և խնդրակ-
ներ ընդունելէ յետոյ։

25 տարիէ ի վեր ամուսնացած է Խոա
Սէքսթընի հետ։ Եղբայրը Նիւ-Եորքի նշանա-
ւոր փաստաբաններէն մէկն է։

ՍՊԱՆՆՈՑ ԹԱԳԱՌՈՐԸ

Ալֆոնս Ժ. Մպանիոյ դեռատի թագա-
ւորը, Մառի Գրիսթինի (խնամակալ թագու-
հին) և Ալֆոնս Ժ. Ի զաւակն է։

Ծնած է 1886 մայիս 17 ին, իր հօրը
մահուանէն քանի մը ամիս ետքը։ Երկու անդ-
րանիկ քոյրեր ունի, Ասթիւրի իշխանուհին
և Մառի Թէրէզ։

Ալֆոնս Ժ. 12 տարու է հիմա թէ և,
սակայն կանխահաս հասկացողութեան մը
տէր է։

Շատ խելացի է ու չափազանց կաշխա-
տի՝ զարմանալի դիւրութիւնով մը սորվելով
ինչ որ իրեն կ'ուսուցուի։

Իր ամբողջ փայլուն յատկութիւնները
կը պարտի մօրը, որ անձնուիրութեան և քա-
ջութեան զարմանալի օրինակ մը տուած է,
ամուսնոյն մեռնելէն վերջ իր անձնական ամ-
բողջ վշտերը զսպելով, և իր զաւակը պէտք
եղածին պէս դաստիարակելու ծանր պար-
տականութիւնը իր վրան առնելով։

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հայ դերասանական ընկերութեան կասակե-
րակ Պ. Հ. Վարժապետեան իր նպաստի երեկոյթը
կուսայ վաղը գիշեր Ապու Խալիլ բաւոնը։

Հետաքրքրական եւ բարոյալից բաւեալապա մը
ՄէՏԵԱՆ պիտի ներկայացուի ամբողջ ընկերութեան
կողմէ։

Գլխաւոր դերը պիտի կատարէ Օր. Ե. Գարագաւ։
Շատ ընթանիմեր արդէն խոսացած են իրենց
ներկայութեամբ բաշալտել բեմի այդ վաղիմի աւ-
խասաւորը։

ՏՕՔ. Ռ. ՈՒՐՅԱԼԵԱՆ

Ա. Կ. Ն. Ա. Բ. Յ. Ժ.

Պատիւ ունի ծանուցանելու թէ իր դարձնաւ տունը հաստատած է Գաւիթէ, Պալատի փողոց, Բաւալ վաճառատան մօտ, Մանուսա Օթէլին մէջ, ուր պիտի բնակուին հիւանդները ամեն օր:

Տօք. Ուրիշեան, նորագոյն գիւտերու միջոցաւ, քիչ ժամանակի մէջ կը դարձանէ շիւ աշքերը, հինցած կրակաւորները և ընդհանրապէս ամեն տեսակ աշքի հիւանդութիւնները:

Ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, աղբատները ձրի պիտի դարձանէ, առաւօտեան ժամ 8էն 10: 3—8

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԵՔԹԻ, ՇՐԱՏ ԱՋԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԻ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԿԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոյներ, և ընդ մաքրութիւն, ճշգրտապահութիւն, և խիստ չափաւոր գին: 19.—24

ՅՈՎԱԿԻՄ ԶԱՏԵԱՆ

ԺԱՄԱԳՈՐԾ

ԽԱՆ-ԽԱՆԻ, ՓՈՂՈՑ

ձեկադիր խան, քիւ 16

Գ. Ա. Հ. Ի. Ե.

Արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ յիշեալ ժամագործը՝ պատրաստ է գոհացնել այն ամեն յաճախորդները որոնք նորոգելու համար ժա. մացոյցներ պիտի յանձնեն իրեն: Դիւրամտաշէլի գիններ: 2—10

Դ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ԳԱՀԻՐԷ ՄՈՒՍԻ փողոց ԳԱՀԻՐԷ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ արանց կտնայ 120 դր. և մինչեւ 2500 դր.:

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.:

Եթէ կուզէք նիւթէ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.:

Եթէ կուզէք պատի և բոնուրի բաղմազան բանտիւներ գաղղիական եւ ամերիկեան

Եթէ կուզէք նորածեւ շղթաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպատ

Եթէ կուզէք այլ և այլ գոհարեղէնք աղամանդեայ, ոսկի, արծաթ, ոսկեպատ

Դ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄՈՒՍԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 10—20

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՌԱԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գին երով: Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեպիլարիներ: Թարմ համալից ջուրեր, անուշահոտութիւն և ևն. բնաւածական և մանրադիտական քննութիւնը: Դեղարանն կը յաճախեն հայ և օտարազգի ծա. նօթ թփիչներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղբատայ համար: 50—50

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյլերեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա. հիւրէ հաստատուած է և մեծապէս դոհ թուղուցած իր յաճախորդները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա Էլ Խաւրա, Թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրութիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ. մաքրութիւն, արագութիւն ու վայելչութիւն թէ ածիլման և թէ վարսայարդարութեան մասին:

Ա. Զ. Դ.

Հարտարապետ Պողոս Խտրեան, վկայեալ Պոլսոյ գեղարուեստական վարժարանէն, ճարտարապետական գրասենեակ մը բացած է Մուսի փողոց, ժամագործ Գրամէր ընկ. ղէմի շէնքին երկրորդ յարկը: Կը ստանձնէ շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամէն տեսակ ճարտարապետական յանձնարարութիւններ: Նաեւ փափաքողներուն գծա. գիտութեան և ճարտարապետութեան մասնաւոր դասեր կուսանդէ:

Գրասենեակը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 8էն 12 և 2էն 7 (յ.մ.) 8—10

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN
Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երազրի

ՃԱՇԱՐԱՆ “ԼՈՒՍԻՆ,”

Քրէտի Լիօնէի բովընտի փողոցը Արեւ ճաշա. րանի ճիշտ դէմը նոր բացուած այս հայկական ճաշարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն ըն. տիր սնունդ, կերակուրներու պէսպիսութիւն, խը. նամեալ մաքրութիւն, փութկոտ սպասարկութիւն և զիւրաւանաշէլի գիններ:

Ի մօտոյ նոր ճիւղ մին ալ պիտի աւելցուի դա. րեջուրի և Բեպապի: 6—8

ՆՈՐ ՓՈՒՌ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արդոյ հասարակութեան թէ ամսոյս 1էն սկսեալ գնած ենք Տարպէլ-Կինէնայի Հայկական փողոց և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները: Այդ փուռին գործելու եղա. նակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմու. ծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական ունէ փուռի մը պէս լիւլի գոհացնել իրենց վատահու. թեամբ գմեղ պատուոյ յաճախորդները:

Կը սիրենք յուսալ որ պատուական ազգայինք զմեզ պիտի բաշտակեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ս. Զուրիկեան եւ Եղբար Զաքարովեան 14—15

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Յունուար 1898

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանիս	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
Տամանհուր	» 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Աղեքսանդրիա	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՑԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԹ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն առտ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպ. 1 2 3 կարգ	Էքսորէս 1 2 3 կարգ
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	Երեկ. 2 30	Երեկ. 4 15	Երեկ. 6 15	Երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	Երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանիս	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
Պէնհա	» 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Գահիրէ	» 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՑ	ԵՐԵԿՈՑ
Դահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէլ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	» 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	» 1 20	7 5
Զակահիկ	» 1 34	8 54	Զակահիկ	» 3 7	8 53
»	մեկ. 1 44	9 4	»	մեկ. 3 17	9 3
Խամալիւիա	» 3 40	1 —	Պէնհա	» 4 13	9 47
Սիւէլ կայարան	» —	5 —	»	մեկ. 4 17	9 4
Տօք (բարափ)	» 6 55	—	Գահիրէ	» 5 5	10 36